ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» սեպտեմբերի 2020 թվականի N 322

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0140-0020 ԾԱԾԿԱԳՐԻ 4-ՐԴ ՄԻԿՓՈՇՐՋԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 15.05.2001 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 2 հասցեի բնակիչ Արմենակ Ռուբիկի Առաքելյանի դիմումը, 09.03.1994թ. կազմված սեփականության վկայագիրը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0140-0020 ծածկագրում գտնվող 638.1 քմ բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան համայնքի 06-007-0140-0020 ծածկագրի հողամասի մակերեսը 638.1 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 638.1 քմ մակերեսով հողամասից 600.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արմենակ Ռուբիկի Առաքելյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 38.1 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի

գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Արմենակ Ռուբիկի Առաքելյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների, բացառությամբ 15.05.2001թ. հետո ինքնակամ կառուցված 13.74 քմ բաց պատշգամբի և 8.33 քմ աստիճանավանդակի, նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան համայնքի 06-007-0140-0020 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 80.8 քմ մակերեսով նկուղի, 82.32 քմ մակերեսով բնակելի տան, 27.69 քմ մակերեսով ավտոտնակի, 35.97 քմ մակերեսով սարայի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Արմենակ Ռուբիկի Առաքելյանի սեփականության իրավունքը, բացառությամբ 2002թ. ինքնակամ կառուցված 13.74 քմ մակերեսով բաց պատշգամբի և 8.33 քմ մակերեսով աստիճանավանդակի:
4. Վերը նշված անշարժ գույքի՝ ք. Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 4-րդ փողոց 16 տուն փոստային հասցեն փոխարինել և հաստատել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան Նարեկացի փողոց թիվ 16 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» սեպտեմբերի 2020 թվականի N **323**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019 թվականի N 86-Ն որոշման 4-րդ կետի բ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1) «4111 – Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից 7000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ գումար կատարել տեղաշարժ նույն նախահաշվի «4112–Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածի գումարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» սեպտեմբերի 2020 թվականի N **324**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 16.02.2006Թ. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԻՎ 75 ՈՐՈՇՈՒՄՈՒՄ ՍԽԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ք. Ստեփանավան Իսահակյան փողոց թիվ 1 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Համլետ Արամի Նադիրյանի կողմից ներկայացված դիմումը, 31.01.2005 թ. թիվ 1148964 աշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, Ստեփանավանի քաղաքապետի 16.02.2006թ. թիվ 75 որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Իսահակյան փողոց թիվ 1 հասցեի անշարժ գույքի սեփականատեր է հանդիսանում Համլետ Արամի Նադիրյանը ծնված 10.10.1946թ. /անձնագիր՝ AN 0651958, տրված 13.09.2013թ. 053-ի կողմից/:
2. Ճշտել Ստեփանավանի քաղաքապետի 16.02.2006թ. թիվ 75 որոշման մեջ կատարված հետևյալ անճշտությունները՝
   - Նշված որոշման մեջ գրառված Իսահակյան 1/2 սխալ գրառված փոստային հասցեն կարդալ Իսահակյան փողոց 1,
   - Անիչկա Դալլաքյան և Ա. Դալլաքյան սխալ գրառված բառերը կարդալ Համլետ Արամի Նադիրյան
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» սեպտեմբերի 2020 թվականի N **325**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0134-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ՀՐԱՉԻԿԻ ՂԱԲՈՒՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Հրաչիկի Ղաբուզյանի կողմից ներկայացված դիմումը, 10.05.1990թ. թիվ 5 Ստեփանավանի քաղխորհրդի գործկոմի նիստի քաղվածքը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0134-0002 ծածկագրում գտնվող 604.6 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0134-0002 ծածկագրի հողամասի մակերեսը 604.6 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 604.6 քմ մակերեսով հողամասից 600 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով

վերահատկացնել Գառնիկ Հրաչիկի Ղաբուզյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 4.6 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Գառնիկ Հրաչիկի Ղաբուզյանին համաձայն « ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ » ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի:

3. Վերը նշված անշարժ գույքի՝ ք. Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 18-րդ փողոց 2 փոստային հասցեն փոխարինել և հաստատել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան Պ.Սեվակ փողոց թիվ 2 հողամաս:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**